«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

«28» օգոստոսի 2021թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 8 անդամները

1. Դանիելյան Մերի (մասնակցում էր հեռավար)
2. Պետրոսյան Մարգարիտա (մասնակցում էր հեռավար)
3. Հովհաննիսյան Մանե
4. Մկրտչյան Սերժիկ
5. Ասրյան Հենրիկ
6. Ավանեսյան Կարո
7. Ղուլունց Վիգեն

Նիստին ներկա չէր

1. Հովսեփյան Մենուա

Նիստը նախագահում էր Կարո Ավանեսյանը:

Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը, հաշվապահ Մայրանուշ Թոխունցը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Կ. Ավանեսյան)
2. 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիայի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
3. Եռամսյակային հաշվետվության մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Թոխունց)
4. Պակաս խտությամբ չորս երկրորդ դասարան ունենալու մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
5. Ներքին գնահատման հաշվետվության հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ տնօրեն՝ Դ.Կոստանդյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Կ. Ավանեսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիայի քննարկման և հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց դպրոցի 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիան, նշեց, որ այն կազմվելու համար հիմք են հանդիսացել նախնական և հիմնական դասաբաշխումները, ինչպես նաև սահմանված ձևանմուշին համապատասխան մյուս պահանջները:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողները նշեցին, որ ուսումնասիրել են դպրոցի տարիֆիկացիան և այն համապատասխանում է բոլոր պահանջներին:

Որոշեցին՝ Հաստատել Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիան:

Լսեցին 3. Եռամսյակային հաշվետվության մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Թոխունց)
Հաշվապահը ներկայացրեց դպրոցի II (երկրորդ) եռամսյակի ֆինանսական

հաշվետվությունը: Դպրոցի 900288000020 ՀՀ-ի մնացորդը առ 01.01.2021թ. կազմել է 14171,5 դրամ, որից 7473,3 դրամը սննդի գումար է: 2021 թվականի I (առաջին) կիսամյակում դպրոցի ֆինանսավորումը կազմել է 14171,5 դրամ, ծախսը կազմել է 59604,5 դրամ, որից 49251,3 աշխատավարձ, 10353,2 շարունմնակական ծախսեր: Մնացորդը առ 01.07.2021 թ. կազմում է 9958,2 դրամ:

Արտահայտվեցին՝ Կարո Ավանեսյանը, Հենրիկ Ասրյանը

Արտահայտվողները նշեցին, որ իրենց կարծիքով դպրոցը ֆինանսները կառավարել է արդյունավետ:

Որոշեցին՝ Հաստատել դպրոցի եռամսյակային հաշվետվությունը:

Լսեցին 4. Պակաս խտությամբ չորս երկրորդ դասարան ունենալու մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց նախորդ տարվա փորձի վրա և առաջարկեց թույլ տալ այս տարի ևս ունենալ ցածր խտությամբ դասարաններ չորս երկրորդ դասարան: Դավիթ Կոստանդյանը ներկայացրեց նաև դպրոցի լրացուցիչ հնարավորությունները:

Արտահայտվեցին՝ Մայրանուշ Թոխունցը, Մանե Հովհաննիսյանը

Մ.Թոխունցը ներկայացրեց դպրոցի ֆինանական հնարավորությունները և տնօրենի կողմից կատարված աշխատանքները, որոնք միտված են լրացուցիչ միջոցների ձեռք բերմանը:

Մ.Հովհաննիսյանն առաջարկեց հաշվի առնել նախորդ տարվա փորձի արդյունքներն ու ծնողների կողմից արված առաջարկները:

Որոշեցին՝ Հաշվի առնելով տնօրեն Դավիթ Կոստանդյանի հիմնավորումները և դպրոցի ֆինանսական հնարավորությունները թույլ տալ օրենքի շրջանակներում ունենալ ցածր խտությամբ 4 (չորս) երկրորդ դասարան:

Լսեցին 5. Ներքին գնահատման հաշվետվության հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Դավիթ Կոստանդյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց դպրոցի ներքին գնահատման հաշվետվությունը, անդրադարձավ ձեռքբերումներին, բացթողումներին:

Արտահայտվեցին՝ Մերի Դանիելյանը, Տաթևիկ Աղավելյանը, Մարգարիտա Պետրոսյանը

Արտահայտվողները նշեցին, որ մանրամասնորեն գրի է առնվել ու ներկայացվել դպրոցի ներքին գնահատումը, շեշտվեց, որ հանձնաժողովի կողմից կատարվել է ծավալուն աշխատանք:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ներքին գնահատման հաշվետվությունը:

Նիստը վարող՝ _____ Կ. Ավանեսյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«27» սեպտեմբերի 2021թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 8 անդամները

1. Դանիելյան Մերի (քարտուղար)
2. Պետրոսյան Մարգարիտա
3. Հովհաննիսյան Մանե
4. Մկրտչյան Սերժիկ
5. Ասրյան Հենրիկ
6. Ավանեսյան Կարո
7. Ղուլունց Վիգեն

Նիստին ներկա չէր

1. Հովսեփյան Մենուա

Նիստը նախագահում էր Կարո Ավանեսյանը:

Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Կ. Ավանեսյան)

2. Դպրոցի ներքին կարգապահական կանոններում կատարվող փոփոխությունների մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Կ. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. Դպրոցի ներքին կարգապահական կանոններում կատարվող փոփոխությունների մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Դավիթ Կոստանդյանը ներկայացրեց ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N17-Ն հրամանի պահանջները: Զեկուցողը առաջարկեց դպրոցի կանոնավոր գործունեությունը շարունակելու և ստեղծված համաճարակային պայմաններում դասապրոցեսի արդյունավետ կազմակերպման համար կատարել փոփոխություններ ներքին կարգապահական կանոներում՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի N 24 հրամանի:

Արտահայտվեցին՝ Տաթևիկ Աղավելյանը, Վիգեն Ղուլունցը

Արտահայտվողները նշեցին, որ համաճարակային կանոնների և ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով սահմանված կանոնների պահպանումը կարևոր են, որպեսզի դասապրոցեսն իրականացվի պատշաճ, առկա եղանակով:

Որոշեցին՝ Հաստատել դպրոցի ներքին կարգապահական կանոններում կատարված փոփոխությունները:

Նիստը վարող՝ _____ Կ. Ավանեսյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«23» դեկտեմբերի 2021թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 9 անդամները

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Մկրտչյան Սերժիկ
6. Ասրյան Հենրիկ
7. Ավանեսյան Կարո
8. Ղուլունց Վիգեն
9. Աղավելյան Տաթևիկ

Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

2. 2021 թվականի ֆինանսական մնացորդային գումարից աշխատողներին հավելավճար տրամադրելու մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2021 թվականի ֆինանսական մնացորդային գումարից աշխատողներին հավելավճար տրամադրելու մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

Զեկուցողը ներկայացրեց դպրոցի աշխատողների կողմից կատարված աշխատանքները, արձանագրեց հաջողություններն ու ձեռքբերումները:

Հաշվի առնելով աշխատողների համագործակցված արդյունավետ աշխատանքը, ուսուցիչների պատրաստակամությունը՝ ուղղված դպրոցում կրթության որակի բարձրացմանը, աշխատողների հետևողական և սրտացավ վերաբերմունքը շենքային պայմանների բարելավմանը՝ Մենուա Հովսեփյանն առաջարկեց հավելավճար տրամադրել աշխատողներին՝ աշխատավարձի 100%-ի չափով:

Արտահայտվեցին՝ Սերժիկ Մկտչյանը, Հենրիկ Ասրյանը, Տաթևիկ Աղավելյանը, Դ. Կոստանդյանը

Արտահայտվողները նշեցին, որ համակարծիք են զեկուցողի հնչեցրած կարծիքի հետ: Դավիթ Կոստանդյանը նշեց, որ իսկապես աշխատակիցներն իրականացնում են համագործակցված արդյունավետ աշխատանք, պատրաստակամ են, բոլոր աշխատում են ի շահ դպրոցի և դպրոցում կրթության որակի բարձրացման ուղղությամբ:

Որոշեցին՝ 2021 թվականի ֆինանսական մնացորդային գումարից աշխատողներին տրամադրել հավելավճար՝ աշխատավարձի մեկ ամսվա աշխատավարձի 100%-ի չափով:

Խորհրդի նախագահ՝ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

«04» հունվարի 2022թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 9 անդամները

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Մկրտչյան Սերժիկ
6. Ասրյան Հենրիկ
7. Ավանեսյան Կարո
8. Ղուլունց Վիգեն
9. Աղավելյան Տաթևիկ

Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը, հաշվապահ Մայրանուշ Թոխունցը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիայի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
3. 2022 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկման մասին:
(զեկուցող՝ Մ. Թոխունցը)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիայի քննարկման և հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց դպրոցի 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիան, նշեց, որ այն կազմվելու համար հիմք են հանդիսացել նախնական և հիմնական դասաբաշխումները, ինչպես նաև սահմանված ձևանմուշին համապատասխան մյուս պահանջները:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողները նշեցին, որ ուսումնասիրել են դպրոցի տարիֆիկացիան և այն համապատասխանում է բոլոր պահանջներին:

Որոշեցին՝ Հաստատել Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիան:

Լսեցին 3. 2022 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Թոխունցը)
Զեկուցող Մայրանուշ Թոխունցը ներկայացրեց 2022 թվականի բյուջեի նախնական հաշվարկները:
Անցած 2021թ. հունվարի 1-ի դրությամբ տարեսկզբի մնացորդը կազմել է 14171,5 դրամ, որից 7470,0 հազարը սննդի զումար: 2021 թվականին ֆինանսավորվել է 127983,6 դրամ, փաստացի ծախսը կազմել է 126163,5

դրամ, որի արդյունքում տարեվերջյան մնացորդը կազմում է 15991,6 դրամ, որից 10234,500 դրամը՝ սնունդ:

Տարվա ընթացքում կատարվել է ընթացիկ վերանորգման, նոր պատուհանների տեղադրամ աշխատանքները, որոնք կնպաստեն շենքի ջեռուցումը ավելի արդյունավետ դարձնելուն:

Տրվել է տարեվերջին մեկ աշխատավարձի չափով աշխատավարձի հավելավճար՝ բոլոր աշխատողներին:

Եթե կառավարության որոշմամբ աշխատավարձի չափի նկատմամաբ չլինի փոփոխության որոշումներ, դպրոցին անհրաժեշտ կլինի 130,164.000 դրամ ֆինանսավորում, որից՝

1.Աշխատավարձ 110,000 մլն դրամ

2. Ընթացիկ ծախսեր 17,500,0 հազար, որի մեջ ներառված է նաև 7,5 մլն սննդի գումար:

3.Կապիտալ ծախսեր 2664,0 հազար դրամ, որի մեջ կներառվիա նաև դպրոցին անհրաժեշտ հիմնական միջոցներ կամ սարքավոումներ գնելու համար:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողները նշեցին, որ իրենց կարծիքով դպրոցը ֆինանսները կառավարել է արդյունավետ:

Որոշեցին՝ Հաստատել բյուջեի նախագծի նախնական տարբերակը:

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

«11» մարտի 2022թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 9 անդամները

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Մկրտչյան Սերժիկ
6. Ասրյան Հենրիկ
7. Ավանեսյան Կարո
8. Ղուլունց Վիգեն
9. Աղավելյան Տաթևիկ

Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացում:
(զեկուցող Դ. Կոստանդյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացման մասին հարցը:
(զեկուցող Դ. Կոստանդյան)
Զեկուցողը կարևորեց ուսուցիչ-հատուկ մասնագիտական թիմ համագործակցությունը, նշեց, որ ուսուցչի օգնական նախքան դասապրոցեսի սկսելը, պարտադիր կերպով պետք է ստանա համապատասխան ցուցումներ տվյալ օրվա դասի ընթացքում իրականացվող և իրականացվելիք աշխատանքների հետ կապված, որից հետո նոր մեկնարկի ԿԱՊԿՈՒ աշակերտի հետ աշխատանքը: Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսուցիչ-ծնող համագործակցությանը: Առաջարկեց հաճախակի կազմակերպել քննարկումներ ուսուցչի, ուսուցչի օգնականների և ծնողների միջև՝ առաջացած խնդիրները լուծելու նպատակով: Զեկուցողը ներկայացրեց նաև ԱՈՒՊ-ների լրացման ընթացքը:

Արտահայտվեցին՝ Մերի Դանիելյան, Մարգարիտա Պետրոսյան:
Արտահայտվողները նշեցին, որ որոշ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքը չի հաջողվում, քանի որ այդ աշակերտներն ունեն հարմարեցման խնդիրներ, նշեցին, որ անհրաժեշտ են համարում այդ ուղղությամբ ավելի ինտենսիվ աշխատանքներ իրականացնել:

Որոշեցին՝ Ապահովել ուսուցիչ-ուսոցչի օգնական-ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչ-ծնող կապը, այն ավելի սերտացնել, ինչպես նաև հաճախակի կազմակերպել եռակողմ հանդիրումներ և քննարկումներ՝ ուսուցիչների, ուսուցչի օգնականների, ծնողների միջև, ըստ անհրաժեշտության ընդգրկել նաև ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչներին: ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքներն իրականացնել հիմք ընդունելով աշակերտների ԱՈՒՊ-ները և դրանցում սահմանված պարզեցումները:

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

«20» մայիսի 2022թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 6 անդամները

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Ղուլունց Վիգեն
6. Աղավելյան Տաթևիկ

Նիստին ներկա չէին կառավարման խորհրդի 3 անդամները

1. Մկրտչյան Սերժիկ
2. Ասրյան Հենրիկ
3. Ավանեսյան Կարո

Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. 2021-2022 ուռումնակա տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքները:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
3. 2021-2022 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների արդյունքները:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
4. Սպորտդահլիճի վերանորոգման համար կարիքի գնահատում՝ դրամաշնորհային ծրագրին մասնակցելու համար:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
5. Վարչատնտեսական աշխատակազմից թվով 6 (վեց) աշխատակցի հավելավճար տալու մասին:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2021-2022 ուռումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց 2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքները, հրապարակեց դպրոցի առաջադիմությունը և որակը, բարձր և ցածր առաջադիմություն որակ ունեցող դասարանների, գերազանցիկ, հարվածային, տարբեր մրցույթների մասնակցության, առարկայական օլիմպիադայի դպրոցական, մարզային և հանրապետական փուլերի արդյունքների մասին: Զեկուցողը անդրադարձավ նաև մեթոդմիավորումների գործունեությանը, ուսուցման գործընթացում առարկայական չափորոշչային պահանջների կատարման, որակյալ կրթության ապահովման խնդիրներին:
Ներկայացվեց արտադասարանական խմբակների գործունեությունը:

Արտահայտվեցին՝ Վիգեն Ղուլունցը, Մերի Դանիելյանը

Վիգեն Ղուլունցը. «Իմ կարծիքով, պետք էհատկապես ուշադրություն դարձնել ցածր առաջադիմություն ունեցող դասարանների ուսուցման որակն ու արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ աշխատանքներին: Կարելի է հաճախադեպ դարձնել ինտելեկտուալ խաղերը, բանավեճերը, մրցույթները, ղրույց-դասախոսությունները՝ տարբեր թեմաներով:

Մերի Դանիելյանը. «Կարծում եմ, որ հետևողական, նպատակային գործունեության շնորհիվ կարելի է հասնել լուրջ հաջողությունների»:

Որոշեցին՝ 1. Հավանություն տալ տնօրենի ներկայացրած 2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին ներկայացված հաշվետվությանը:

2. Հանձնարարել տնօրենությանը՝ հաշվետվության մեջ նշված բացթողումները շտկելու համար ձեռնարկել միջոցներ:

3. Հանձնարարել մեթոդմիավորումներին՝ դպրոցականների առարկայական օլիմպիադայի մասնակիցների կողմից առավել ակտիվ և արդյունավետ մասնակցություն ապահովել:

Լսեցին 3. 2021-2022 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների արդյունքների մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը ներկայացրեց դպրոցի աշակերտներին 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում առարկայական օլիմպիադաներում և սպորտային միջոցառումներում գրանցած մի շարք հաջողությունները: Դպրոցի 7 (յոթ) աշակերտ առաչկայական օլիմպիադաների մարզային փուլում արժանացել են առաջին, երկրորդ, երրորդ կարգի դիպլոմների՝ «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Կենսաբանություն», «Հայոց եկեղեցու պատմություն» առարկաներից:

8 «Բ» դասարանի աշակերտուհի Ջուլիա Մարգարյանը «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայից արժանացել է երկրորդ կարգի դիպլոմի:

9 «Ա» դասարանի աշակերտուհի Մարի Ծատրյանը «Հայոց լեզու» առարկայից արժանացել է երկրորդ կարգի դիպլոմի, «Ռուսաց լեզու» առարկայից առաջին կարգի դիպլոմի: Մարին մասնակցել է «Հայոց լեզու» առարկայի հանրապետական փուլին:

9 «Ա» դասարանի աշակերտ Արմեն Սարգսյանը «Ռուսաց լեզու» առարկայից արժանացել է երկրորդ կարգի դիպլոմի:

9 «Ա» դասարանի աշակերտուհի Անի Ալավերդյանը «Կենսաբանություն» առարկայից արժանացել է երկրորդ կարգի դիպլոմի:

9 «Ա» դասարանի աշակերտուհի Լիա Թունյանը «Հայոց լեզու» առարկայից արժանացել է երրորդ կարգի դիպլոմի:

9 «Ա» դասարանի աշակերտ Աշոտ Տատինցյանը «Հայոց լեզու» առարկայից արժանացել է երրորդ կարգի դիպլոմի:

«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի կողմից կազմակերպվող «Հանրապետական հանրակրթական բաց օլիմպիադա 2022»- ում Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 6-րդ և 7-րդ դասարանի աշակերտներ Ժակ Հովսեփյանին, Էլեն Պողոսյանին, Մարի Խաչատրյանին, Ստելլա Քոչարյանին, Դայանա Մարտիրոսյանին, Լիլիթ Հովսեփյանին՝ ցուցաբերված բարձր արդյունքների համար շնորհվել են դիպլոմներ և գովասանագրեր:

Առարկայական օլիմպիադաներում հաջողություններ են գրանցել նաև Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի շրջանավարտները, ովքեր այժմ սովորում են Գորիսի ավագ դպրոցներում:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողները նշեցին, որ դպրոցի աշակերտների կողմից ցուցաբերած արդյունքները գոհացուցիչ են, հատկապես տպավորիչ համարեցին «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի կողմից

կազմակերպվող «Հանրապետական հանրակրթական բաց օլիմպիադա 2022»- ում դպրոցի աշակերտների գրանցած արդյունքները: Արտահայտվողները նշեցին նաև, որ անհրաժեշտ են համարում լրացուցիչ քայլեր ձեռնարկել՝ առարկայական օլիմպիադաներին ավելի մեծ թվով աշակերտների մասնակցություն ապահովելու նպատակով:

Որոշեցին՝ 2021-2022 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների արդյունքների մասին զեկուցումն ընդունել ի գիտություն:

Լսեցին 4. Սպորտդահլիճի վերանորոգման համար կարիքի գնահատում՝ դրամաշնորհային ծրագրին մասնակցելու մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը ներկայացրեց ծրագրի մանրամասները՝ դիմելու անհրաժեշտությունը: Ներկայացվեց անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու համար: Քննարկվեց դահլիճի ներկայիս վիճակը, անդրադարձ կատարվեց գույքի և վերանորոգման հարցերին: Քանի որ սպորտդահլիճը օգգտագործվում է ոչ միայն դպրոցի այլ նաև համայնք կարիքների համար և գտնվում է անմխիթար վիճակում և գույքային և վերանորոգման առումով անհրաժեշտ ենք համարում դիմել ճապոնիայի դեսպանատան կողմից հայտարարված «Մարդկային անվտանգության grassroot» դրամաշնորհային ծրագրին՝ դահլիճը վերանորոգելու և վերակահավորելու միջազգային պահանջներին համապատասխան դահլիճ ունենալու համար:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողները ողջունեցին մտահղացումը և դրամաշնորհային ծրագրին մասնակցելու որոշումը:

Որոշեցին՝ Հաստատել սպորտդահլիճի վերանորոգման համար կարիքի գնահատման իրականացումը՝ դրամաշնորհային ծրագրին մասնակցելու նպատակով:

Լսեցին 5. Վարչատնտեսական աշխատակազմից թվով 6 (վեց) աշխատակցի հավելավճար տալու մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողն առաջարկեց 2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական, ֆինանսական, տնտեսական աշխատանքները լավագույն ձևով կազմակերպելու, դպրոցի հետ կապված բոլոր խնդիրներին աջակցելու և բարեխիղճ աշխատանքի համար ներքոհիշյալ աշխատողներին տալ դրամական պարգևատրություն՝ այդ թվում դպրոցի տնօրենին և հաշվապահին:

1. Դավիթ Կոստանդյան
2. Մայրանուշ Թոխունց
3. Սերգեյ Ավանեսյան
4. Ալիկ Հայրապետյան
5. Արմիդա Գևորգյան
6. Գոհար Ռուբինյան

Արտահայտվեցին՝ Մարգարիտա Պետրոսյանը, Մենուա Հովսեփյանը, Մանե Հովհաննիսյանը

Արտահայտվողները նշեցին որ և որպես աշխատող, և որպես ծնող, և որպես Գորիսի քաղաքացի նկատելի են համարում դպրոցի գործունեությունը, որն իսկապես արժանի է դրվատանքի և խրախուսման:

Որոշեցին՝ 2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական, ֆինանսական, տնտեսական աշխատանքները լավագույն ձևով կազմակերպելու, դպրոցի հետ կապված բոլոր խնդիրներին աջակցելու և բարեխիղճ աշխատանքի համար ներքոհիշյալ աշխատողներին տալ դրամական պարգևատրություն՝ այդ թվում դպրոցի տնօրենին և հաշվապահին:

1. Դավիթ Կոստանդյան

2. Մայրանուշ Թոխունց
3. Սերգեյ Ավանեսյան
4. Ալիկ Հայրապետյան
5. Արմիդա Գևորգյան
6. Գոհար Ռուբինյան

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Կառավարման խորհրդի արձանագրությունների ամփոփման

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում *Կառավարման խորհուրդը* գումարել է 6 *հերթական նիստ*, որոնց համար կազմվել է *6 արձանագրություն:*

Կառավարման խորհուրդը նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	28.08.2021թ.	5
2	2	27.09.2021թ.	2
3	3	23.12.2021թ.	2
4	4	04.01.2022թ.	3
5	5	11.03.2022թ.	2
6	6	20.05.2022թ.	5

Կառավարման խորհուրդի սույն արձանագրությունների մատյանը կազմված է *13* էջից։

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«20» մայիսի 2022թ.